ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

**Աբովյան համայնքի 2026 թվականի կարիքների համար շինարարական ապրանքների ձեռքբերման նպատակով «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/61» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Աբովյան

17/04/2026թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Չոբանյան
Անդամներ՝ Ջ. Սարգսյան, Լ. Իսահակյան, Ա. Առուշանյան
Քարտուղար՝Ք. Բաղդասարյան

1. **Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**

**Ա. Չոբանյան**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
Աբովյան համայնքի 2026 թվականի կարիքների համար շինարարական ապրանքների ձեռքբերման նպատակով «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/61» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սորրև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026թ. ապրիլի 17-ին ստացված պարզաբանումը և դրա վերաբերյալ տրամադրված պատասխան պարզաբանումը՝
Ի պատասխան ներկայացված պարզաբանման հարցման տրամադրվում է հետևյալ պարզաբանման պատասխանը.

| Պարզաբանման հարցում | Պարզաբանման պատասխան |
|---|---|
| Հարգելի պատվիրատու, Ուսումնասիրելով հրավերով ներկայացված տեխնիկական բնութագիրը՝ նկատում ենք, որ չափաբաժին 2՝ յուղաներկ, ապրանքատեսակի մասով բացակայում են որոշ էական բնութագրիչներ: Մասնավորապես՝ Խնդրում ենք հստակեցնել պահանջվող գույնը կամ գույների ցանկը՝ ընդունված գունային ստանդարտներից որևէ մեկի (օրինակ՝ RAL կամ համարժեք) համաձայն: Խնդրում ենք նշել՝ պահանջվում է փայլուն (gloss), կիսափայլ (semi-gloss), թե անփայլ (matte) մակերեսով յուղաներկ: Խնդրում ենք տրամադրել համապատասխան հստակեցում՝ մրցույթի թափանցիկության և առաջարկների համադրելիության ապահովման նպատակով: | Ի պատասխան Ձեր հարցմանը, հայտնում ենք, որ ներկի գույնը նկատմամբ պահանջը ձևավորվում է ըստ աշխատանքային անհրաժեշտության և կսահմանվի պատվիրատուի կողմից՝ պայմանագրի կատարման ընթացքում: Փայլի աստիճանը (փայլուն, կիսափայլ կամ անփայլ) ևս կսահմանվի պատվիրատուի կողմից՝ հաշվի առնելով շահագործման պահանջները: Մատակարարվող ներկը պետք է համապատասխանի տեխնիկական առաջադրանքով սահմանված որակական ցուցանիշներին, նախատեսված լինի նաև արտաքին աշխատանքների համար և ապահովի անհրաժեշտ դիմացկունություն և երկարակեցություն: |

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

| | | |
|---|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ | | Ա. Չոբանյան |
| Գնահատող հանձնաժողովի անդամներ | | Ջ. Սարգսյան |
| | | Լ. Իսահակյան |
| | | Ա. Առուշանյան |
| Գնահատող հանձնաժողովի քարտուղար | | Ք. Բաղդասարյան |